ԱՆՀԱՏԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Անհատի բազմակողմանի զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է մեր հասարակության առաջընթացի օբյեկտիվ պայմաններով, ամենից առաջ՝ հասարակական արտադրության հետագա զարգացման պահանջմունքներով։ «Մեծ գործը՝ կոմունիզմի կառուցումը, անկարելի է առաջ շարժել առանց իրեն՝ մարդու բազմակողմանի զարգացման»[1],— նշեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXIV համագումարին կուսակցության Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ։ Հիմնավորելով բազմակողմանի զարգացած մարդու ձևավորման օբյեկտիվ անհրաժեշտությունը, մարքսիզմ-լենինիզմի կլասիկներն այն քննել են որպես հասարակական առաջադիմության, արտադրության անընախընթաց աճի և հենց հասարակության գլխավոր արտադրողական ուժի՝ աշխատավորի գիտական, կուլտուրական, բարոյական և ֆիզիկական զարգացման հիմնական պայմաններից մեկը։ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը գրել են, որ ապագա հասարակության մեջ «յուրաքանչյուր մարդու կոչումը, նշանակությունը, խնդիրն է՝ բազմակողմանի զարգացնել իր բոլոր ընդունակությունները»[2]։

Վերջին տարիներին երևան են եկել բազմաթիվ ուշագրավ աշխատություններ, որոնցում փիլիսոփայական, սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական պլանի վրա քննվում են անհատի բազմակողմանի զարգացման պրոբլեմի ամենատարբեր կողմերը։ Սակայն այդ ուսումնասիրությունների մեջ ավելի մեծ ուշադրություն է նվիրվում անհատի սոցիալական միջավայրին, հասարակական հարաբերությունների համակողմանի լուսաբանմանը, քան բուն անհատին, նրա ներքին էության կառուցվածքի բացահայտմանը։ Այդ պատճառով սոցիոլոգիական կատեգորիաների համակարգում մինչև այժմ չկա «բազմակողմանի զարգացած անհատ» հասկացության պարզորոշ սահմանումը, չկա և միասնական կարծիք նրա էության և բովանդակության մասին։ Մեր կարծիքով՝ «բազմակողմանի զարգացած անհատ» հասկացության բովանդակության վերաբերյալ հստակ պատկերացման բացակայությունն արդյունք է այն բանի, որ այդ հասկացության էության վերլուծության ժամանակ նրա բաղադրիչները վերցվում են ոչ թե փոխկապակցության և միասնության մեջ, այլ ավելի հաճախ՝ միմյանցից մեկուսացած։ Երբեմն, որպես անհատի բազմակողմանի զարգացման ելակետ վերցվում է մարդկային էության սոսկ այս կամ այն կողմը, մասնավորապես նրա սոցիալական բազմազան դերերի իրացումը և ստեղծագործական ակտիվությունը[3]։ Ուսումնա-

---

1 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը ՍՄԿԿ XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 129։

2 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 282.

3 С. С. Уткин, Ю. Г. Волков, К вопросу о научном понятии «Всесторонне развитая личность» (Проблема личности в теории научного коммунизма, 1974).

սիրողների մի մասն էլ անհատի բազմակողմանի զարգացումը կապում է նրա գործունեա էության հետ, առանձնապես ընդգծելով աշխատանքային-արտադրական գործունեությունը[4]։ Որոշ ուսումնասիրողներ էլ անտեսում են «բազմակողմանի զարգացած անհատ» հասկացության համընդհանրությունը և այն ըմբռնում որպես առանձին սոցիալական խմբերի հարաբերությամբ կիրառվող հատկանիշ[5]։ Ոմանք էլ անհատի բազմակողմանի զարգացումը կապում են ոչ թե մարդու ներքին ուժերի բացահայտման, նրա անհատականության դրսևորման ու ծավալման, այլ դրանց սոցիալական պայմանների և անհրաժեշտ նախադրյալների գոյության հետ[6]։ Երբեմն էլ բազմակողմանի զարգացած անհատ ասելով նկատի են ունենում բարձրագույն կամ միջնակարգ կրթությամբ կամ բացարձակ կատարելության հասած մարդուն։ Սակայն ամենից հաճախ «բազմակողմանի զարգացած անհատ» հասկացությունը հանգեցվում է մարդու սոցիալականացման գաղափարին, ամենից առաջ սոցիալական փորձին նրա լայն հաղորդակցմանը և յուրացմանը[7]։

Մեր կարծիքով՝ վերը նշված տեսակետներից և ոչ մեկը չի ներառում մարդու բազմակողմանիության բոլոր բաղադրիչները, չի ընդգրկում նրա էության ամբողջ հարստությունը, հասարակական հարաբերությունների ամբողջությունը։ Մինչդեռ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը խոսելով բազմակողմանի զարգացած անհատի ձևավորման մասին, գրել են. «մարդը իր բազմակողմանի էությունը յուրացնում է բազմակողմանի կերպով, այսինքն՝ որպես ամբողջական մարդ»[8]։

«Բազմակողմանի զարգացած անհատ» հասկացությունը կոնկրետ պատմական հասկացություն է, ուստի այն ամենից առաջ պետք է քննել օնթոլոգիական տեսանկյունից, որը հնարավորություն կտա խորությամբ լուսաբանել մարդու «էութենական ուժերի» (Մարքս) դրսևորումը և զարգացումը։

Անհատի բազմակողմանի զարգացումը պետք է ըմբռնել որպես երկմիասնական պրոցես. մի կողմից՝ նրա ձիրքերի և ընդունակությունների բացահայտում, որոնք պայմանավորված են սոցիալական անհրաժեշտ պայմանների գոյությամբ և, մյուս կողմից, դրանց համակողմանի օգտագործում՝ հասարակական պահանջմունքներին համապատասխան։ Առաջին դեպքում խոսքը մարդու ներքին կարողությունների և ձիրքերի դրսևորման հնարավորությունների մասին է, քանի որ ապագա կոմունիստական հասարակությունը հանդիսանում է «մարդու «բնական հիմունքների» լրիվ զարգացում, անհրաժեշտ հասարակական ասպարեզ նրա կենսական կարևոր դրսևորումների համար»[9], իսկ երկրորդ դեպքում ընդգծվում է անհատի ազատ ու համակողմանի զարգացումը որպես կոմունիստական հասարակության ինքնանպատակի, որովհետև կոմունիզմը «մարդկային էության իսկական յուրացումն է մարդու կողմից և մարդու համար», նա «որպես իր մշտական իրականություն, կստեղծի մարդուն նրա էության ամբողջ հարստությամբ»[10]։ Այսպիսով, անհատի բազմակողմանի զարգացումը պայմանավորված է մի կողմից մարդուն

---

4 Е. А. Ануфриев, Социальная роль и активность личности. М., 1971.
5 «Духовное становление человека», Л., 1972.
6 С. М. Ковалев, О человеке, его порабощении и освобождении. М., 1970.
7 И. И. Резницкий, Философские основы теории индивидуальности. Л., 1973.
8 К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений. М., 1956. стр. 591.
9 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 2, стр. 145.
10 К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений. стр. 588, 594.

ներհատուկ ունակությունների, ձիրքերի և սոցիալական համապատասխան պայմանների միասնությամբ, մյուս կողմից՝ տվյալ անհատի ներքին հարուստ էության բազմազան կողմերի ներդաշնակությամբ։

Անհատի բազմակողմանի զարգացումն ամենից առաջ արտահայտվում է նրա գիտելիքների ու աշխատանքային ֆունկցիաների համակողմանիության, անհատական ընդունակությունների և կարողությունների բացահայտման և հասարակայնորեն օգտակար իրացման մեջ։ Միայն այն ժամանակ, «երբ մարդը ճանաչում ու կազմակերպում է իր «սեփական ուժերը» որպես հասարակական ուժեր...»[11], հնարավոր է դառնում նրա ազատ ու անկաշկանդ զարգացումը սոցիալական կյանքի տարբեր բնագավառներում։

Անհատի էական ուժերի բացահայտումն ու ծավալումն արտահայտվում են մարդկային դրսևորումների ամբողջ հարստության մեջ, այլ կերպ ասած՝ կենսագործունեության անհատական սիստեմում յուրացվում է հասարակական հարաբերությունների ամբողջ բազմազանությունը։ Հենց սա է մարդու բազմակողմանի զարգացման հիմքը, նրա բանական ու բնական ուժերի անընդհատ ծավալման ու կատարելագործման աղբյուրը։ Այս տեսակետից չի կարելի համաձայնվել Ի. Կոնի հետ, որը սահմանափակում է հասարակական հարաբերությունները սոսկ միջանհատային կապերի շրջանակներով։ «Կարո՞ղ եմ ես, չմեղանչելով ճշմարտության դեմ,— գրում է նա,— ինձ անվանել հասարակական բոլոր հարաբերությունների ամբողջություն, եթե իմ գործունեության ոլորտն ակնհայտորեն ներառում է միայն այդ հարաբերությունների աննշան մասը»[12]։ Հեղինակն այստեղ փաստորեն սոցիալական առանձին խմբերի միջև տարբեր «դերային» կապերը նույնացնում է հասարակական հարաբերությունների միագումարի հետ, մոռանալով, որ հենց հասարակական հարաբերությունների ամբողջությունն է որոշում մարդկանց կապերը, այդ թվում նաև բոլոր «դերային» ֆունկցիաները։ Կ. Մարքսը գրել է. «Անհատի իրական հոգևոր հարստությունն ամբողջովին կախված է նրա իրական հարաբերությունների հարստությունից»[13]։ Այս դրույթից հետևում է, որ անհատի զարգացումն իրագործվում է հասարակական կեցության բոլոր ոլորտներում, հասարակական հարաբերությունների ամբողջ բազմազանության մեջ։ Սահմանափակել այդ ոլորտները, նշանակում է նեղացնել բազմակողմանիության զարգացման գաղափարը, իսկ պրակտիկայում՝ զրկել մարդուն համակողմանի դրսևորման ու կատարելագործման հնարավորություններից։

Անհատի բազմակողմանի զարգացման գլխավոր ցուցանիշներից մեկը նրա հասարակական բնույթի ամբողջական իրացումն է, նրա անհատականության լրիվ բացահայտումը։ Մարդու էության համակողմանի դրսևորումը հասարակական և անհատական կեցության որակական փոփոխության հիմնական պայմաններից է։ Անհատի էությունն իր ամբողջ հարստությամբ հանդերձ կմնար կանտյան անիմանալի «ինքնին իր», եթե հասարակության հոգևոր և բարոյական արժեքների յուրացումը չզուգակցվեր նրա ինքնահաստատման ու ինքնարտահայտման հնարավորությունների իրացման հետ։ Բազմակողմանի զարգացած անհատի գլխավոր յուրահատկությունն այն է, որ, ինչպես նշում է Կ. Մարքսը, «նրա սեփական կենսագործումը հանդես է

---

11 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 1, стр. 406.

12 И. С. Кон, Социология личности, М., 1967, стр. 9.

13 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 39։

գալիս որպես ներքին անհրաժեշտություն, որպես պահանջ»[14]։ Հետևաբար, բազմակողմանի զարգացած կարելի է անվանել այն մարդուն, որի բնական ու բանական ուժերի ամբողջ ճարտությունը գործնական կիրառում է գտնում գործունեության տարբեր ոլորտներում, ամենից առաջ՝ ճարտարական արտադրության պրոցեսում։ Մարդու էութենական ուժերի ծավալման և դրանց հանրայնորեն օգտակար իրացման շնորհիվ միայն հնարավոր կլինի «մարդկային էակի նոր հարստացումը»[15], որը, Կ. Մարքսի արտահայտությամբ, կդառնա կոմունիստական հասարակության զարգացման հիմնական օրենքը։

Մարդու սոցիալական էության համակողմանի դրսևորումը պահանջում է գիտելիքների յուրացում, մասնագիտական բարձր որակավորում, կոմունիստական գիտակցականություն, բնության և հասարակության զարգացման օրենքների ճանաչում և նրա գործունեության մեջ նյութական ու հոգևոր կողմերի, կազմակերպական ու կատարողական ֆունկցիաների, անհատական ու համամարդկային հատկությունների միավորում։ Միաժամանակ, բազմակողմանի զարգացած անհատը բնութագրվում է բարոյական, գեղագիտական, ֆիզիկական լավագույն հատկությունների ամբողջությամբ, իսկ նրա արտադրական գործունեությունը օրգանապես շաղկապվում է հասարակական-քաղաքական աշխատանքների, գիտատեխնիկական և գեղարվեստական ստեղծագործության հետ։

Բազմակողմանի զարգացած անհատին բնորոշ կուլտուր-տեխնիկական բարձր մակարդակը, հասարակական-քաղաքական ակտիվությունը, զգացմունքների հարստությունը, ձիրքերի ու ընդունակությունների զարգացումը և դրանց միավորումը մյուս անհատների գիտելիքների, հմտությունների, կարողությունների հետ և այլն, պայմանավորում են նրա մտածողության ունիվերսալիզմը։ Գլխավորն այն չէ, թե ինչ ֆունկցիաներ է կատարում տվյալ անհատը, այլ այն, թե որքանով է ունիվերսալ նրա գործունեության բովանդակությունը, որը և ենթադրում է նրա մտածողության մակարդակի ընդլայնում ու խորացում։ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը գրել են, որ «անհատի մոտ, որի կյանքն ընդգրկում է բազմազան գործունեության լայն շրջան և աշխարհի նկատմամբ պրակտիկ հարաբերությունների տարբեր տեսակներ և, այսպիսով, հանդիսանում է բազմակողմանի կյանք, այդպիսի անհատի մոտ մտածողությունը նույնպես կրում է ունիվերսալ բնույթ, ինչպես նրա կյանքի ամեն մի դրսևորումը»[16]։ Այսպիսով, որքան ընդլայնվում են անհատի իմացության շրջանակները, այնքան ավելի արագ են հայտնաբերվում ու զարգանում նրա ընդունակությունները, որոնց իրացման շնորհիվ հնարավոր է դառնում արտադրական, հասարակական-քաղաքական և հոգևոր գործունեության համատեղում մի մարդու մեջ։

Անհատի բազմակողմանի զարգացման դիալեկտիկան խորությամբ ըմբռնելու համար պետք է նկատի ունենալ, որ նրա համակողմանի ծաղկումը ենթադրում է «բոլոր մարդկանց համար այնպիսի պայմանների ստեղծում, որի ժամանակ յուրաքանչյուրը հնարավորություն կստանա ազատորեն զարգացնելու իր մարդկային բնությունը»[17]։ Միայն կոմունիստական

---

14 К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, стр. 596.

15 Նույն տեղում, էջ 599։

16 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 253.

17 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 2, стр. 554.

հասարակարգում, երբ վերանում են սոցիալական ամենաչնչին տարբերությունները, հաստատվում է հասարակության սոցիալական միատարրություն, ստեղծվում են մարդկանց շփման կոլեկտիվ նոր ձևեր և այլն, անհատը հնարավորություն է ստանում բազմակողմանի զարգացնել իր բոլոր ընդունակություններն ու կարողությունները, լայնորեն մասնակցել նյութական ու հոգևոր արժեքների ստեղծմանը և հասարակական գործերի կառավարմանը։

Սակայն կոմունիզմի օրոք սոցիալական լրիվ հավասարության հաստատումը ամենևին էլ չի նշանակում մարդկանց ձիրքերի, հակումների և ընդունակությունների համահարթում, ինչպես ձգտում են ներկայացնել բուրժուական գաղափարախոսները։ Վ. Ի. Լենինը գրել է. «երբ սոցիալիստները խոսում են հավասարության մասին, նրանք այդ բառի տակ մշտապես հասկանում են հասարակական հավասարություն, հասարակական դիրքի հավասարություն, և ոչ մի կերպ ոչ առանձին անձերի ֆիզիկական և հոգեկան ընդունակությունների հավասարություն»[18]։ Ուստի անհատի բազմակողմանի զարգացումը պետք է ըմբռնել յուրաքանչյուր մարդու անհատական ընդունակությունների և ձիրքերի տեսակետից, որ լիովին բացառում է միօրինակությունը զարգացման ընթացքում։ Մարդկանց ֆիզիկական ուժերը և հոգևոր ունակությունները սոցիալապես պայմանավորված և միատեսակ չեն կարող լինել, քանի որ յուրաքանչյուր անհատ սոցիալական փորձին հաղորդակից է լինում յուրովի։ Անհատի պրակտիկ և տեսական գործունեության ընթացքում ընդունակությունների ձեռքբերումը կատարվում է մարդկային ամեն մի անհատի ֆիզիոլոգիական-հոգեբանական հնարավորություններին համապատասխան։ Ուստի համակողմանիության ծավալումը հենվում է մարդու անհատական հատկությունների և որակների զարգացման այնպիսի աստիճանի վրա, որը հնարավորություն է տալիս դրանք հասցնել կատարելության։

Անհատի բազմակողմանի զարգացումը սերտորեն կապված է ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև եղած էական տարբերությունների հաղթահարման և նրանց հետագա զուգակցման հետ։ Գործունեության այս տեսակների միջև եղած տարբերությունների վերացումն ամենից առաջ պայմանավորված է գիտության և տեխնիկայի առաջադիմությամբ։ Արտադրության լրիվ մեքենայացման և ավտոմատացման, արտադրության տեխնոլոգիայի կատարելագործման և նոր տեխնոլոգիական մեթոդներին անցնելու շնորհիվ տեղի կունենա՝ ա) ֆիզիկական ծանր աշխատանքի վերացում ինչպես հիմնական, այնպես էլ օժանդակ արտադրական պրոցեսներում, բ) ոչ որակյալ ֆիզիկական աշխատանքի փոխարինում որակավորված աշխատանքով, գ) ֆիզիկական աշխատանքի հեշտացում, նրա պայմանների բարելավում և հետագա գեղագիտացում, դ) ֆիզիկական աշխատանքի բնույթի որակական փոփոխություն՝ յուրաքանչյուր աշխատավորի ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր ֆունկցիաների միավորման ուղիով, ե) ֆիզիկական աշխատանքի ինտելեկտուացում, նրա բովանդակության հարստացում և բարդացում, աշխատանք, որն աստիճանաբար մերձենում է ինժեներ-տեխնիկական աշխատանքին, զ) ֆիզիկական աշխատանք կատարողների թվակազմի ավելացում, նրանց ֆունկցիաների վերափոխում՝ կապված ավտոմատ

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 172—173։

սարքերի, ապարատների դիտարկման, հսկողության և տեխնոլոգիական բազմաթիվ պրոցեսների ղեկավարման հետ։

Գիտատեխնիկական առաջադիմության հետևանքով որակական փոփոխությունների կենթարկվի նաև մտավոր աշխատանքը, որը կդառնա աշխատանքի հին բաժանման լրիվ վերացման, մարդկանց պրոֆեսիոնալ-արտադրական գործունեության, կուլտուր-տեխնիկական մակարդակի մեջ և կենցաղում գոյություն ունեցող տարբերությունների վերացման կարևոր պայման։ Մտավոր աշխատանքի բնույթի փոփոխությունները պայմանավորված կլինեն՝ ա) ցածրորակ մտավոր աշխատանքի վերացմամբ, բ) մտավոր աշխատանքի կիբեռնետիկացմամբ, որը բանվորի աշխատանքը վերածում է ինժեներա-տեխնիկական աշխատանքի դրսևորման յուրահատուկ ձևի, գ) մտավոր աշխատանքի հետագա բարդացմամբ, երբ արտադրության մասնակիցը սովորական հսկողությունից, պլանավորումից, նախագծումից, ծրագրավորումից անցնում է բարդ սարքավորումների միաժամանակյա ղեկավարման, դ) աշխատանքի փոփոխման օրենքի գործողության շնորհիվ աշխատանքի այնպիսի տեսակների ստեղծմամբ, որոնք զուգակցում են ֆիզիկական ու մտավոր աշխատանքի միատեսակ ջանքեր, երբ մտավոր գործունեության ֆունկցիաները միավորվում են ֆիզիկական էներգիայի ծախսման հետ, ե) մտավոր աշխատանքով զբաղվողների թվակազմի ավելացմամբ՝ հատկապես նյութական արտադրության ոլորտում, զ) մտավորականության, որպես որոշակի սոցիալական խավի, բարդ կառուցվածքի փոփոխմամբ և նրա հետագա վերացմամբ։

Գիտության փոխարկումը անմիջական արտադրական ուժի, իսկ բուն նյութական արտադրությունը՝ գիտության տեխնոլոգիական ոլորտի, հնարավորություն կտա աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակը հասցնել այնպիսի աստիճանի, երբ յուրաքանչյուր անհատ կարող է կատարել բարձրորակ և՛ ֆիզիկական, և՛ մտավոր աշխատանք։ Իսկ որպեսզի հասարակության բոլոր անդամները միաժամանակ կատարեն և՛ մտավոր, և՛ ֆիզիկական աշխատանք, անհրաժեշտ է հանրակրթական ու կուլտուրական մակարդակի վերելք՝ ընդհուպ բարձրագույն կրթությամբ մասնագետների մակարդակին հասնելը։ Մտավոր և ֆիզիկական աշխատանքի զուգակցումը ենթադրում է ֆիզիկական աշխատանքի միավորում ուսման, նորարարական և գիտատեխնիկական ակտիվ գործունեության, հասարակական-քաղաքական աշխատանքների և գեղարվեստական ինքնագործունեության հետ։

Անհատի բազմակողմանի զարգացման հիմնական նախադրյալներից է մասնագիտության ազատ և ճիշտ ընտրությունը։ Դա ոչ միայն աշխատանքի գիտական կազմակերպման էական պայման է, այլև անհատականության, նրա ստեղծագործական ակտիվության դրսևորման կարևոր միջոց։ Այս կամ այն մասնագիտության ընտրությունը մարդուց պահանջում է ոչ թե ցանկացած, այլ որոշակի հատկություններ։ Անհատը կարող է բավականությամբ կատարել միայն այն աշխատանքը, որի համար նա օժտված է անհրաժեշտ կարողությամբ, երբ նրա գիտելիքները, հակումները, ձգտումները լիովին համապատասխանում են ընտրած մասնագիտությանը և առարկայորեն մարմնավորվում վերջինիս մեջ։ Կոմունիստական հասարակությունը բոլոր աշխատավորներին «հնարավորություն կտա գործնականում արագ յուրացնելու արտադրության ամբողջ սիստեմը, նա նրանց թույլ կտա հերթականորեն

արտադրության մի ճյուղից մյուսին անցնել՝ ելնելով հասարակության պահանջմունքներից կամ նրա սեփական հակումներից»[19]։ Այստեղից հետևում է, որ անհատի բազմակողմանի զարգացումը (ուստի և աշխատանքի հասարակական հին բաժանման վերացումը) հնարավոր է ոչ միայն մասնագիտությունների ազատ ընտրության, այլև մի մասնագիտությունից մյուսին անարգել անցնելու միջոցով։ Վերջինս հանդիսանում է կարևոր պայման միակողմանի գործունեությունից անցնելու բազմակողմանի ստեղծագործական աշխատանքի, որտեղ միայն կարող են լիովին դրսևորվել աշխատավորի ֆիզիկական ու հոգևոր ընդունակությունները։

Մի մասնագիտությունից մյուսին անցնելն ամենից առաջ պայմանավորված է աշխատանքի փոփոխության օրենքի գործողությամբ։ Հիմնավորելով աշխատանքի փոփոխության օրենքը, Կ. Մարքսն այն համարել է «հասարակական արտադրության ընդհանուր օրենք»[20], որի գործողության առավել ունիվերսալ ձևը մտավոր և ֆիզիկական աշխատանքի հերթափոխումն է արտադրության պրոցեսում։ Աշխատանքի փոփոխության օրենքը պայմանավորում է բազմակողմանի զարգացած անհատի նոր տիպի ձևավորումը, որը սկզբից անցնում է մի մասնագիտությունից մյուսին՝ արտադրության մի որևէ ոլորտում, իսկ հետո իր աշխատանքի հիմնական բնագավառից դեպի արտադրության ավելի լայն ոլորտը և, վերջապես, անցնում է ստեղծագործական գործունեության մի շարք տեսակների ոլորտը։

Աշխատանքի փոփոխությունը ենթադրում է ոչ միայն մի մասնագիտությունից անցում մյուսին, այլև պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ աշխատանքների հերթագայում, հիմնական մասնագիտության զուգակցում հասարակական գործունեության, գեղագիտական ստեղծագործության, գեղարվեստական ինքնագործունեության հետ։ Միայն այդ պայմաններում հնարավոր կլինի «մասնագործ բանվորին, հասարակական մասնական որոշ ֆունկցիաների այդ սոսկական կրողին, փոխարինել բազմակողմանիորեն զարգացած անհատով, որի համար տարբեր հասարակական ֆունկցիաները միմյանց հաջորդափոխող եղանակներ են»[21]։

Մասնագիտությունների փոփոխությունն անհրաժեշտորեն հանգեցնում է ավելի լայն պրոֆիլի մասնագիտությունների առաջացման, հարակից և տարբեր մասնագիտությունների համատեղման, որոնք հանդիսանում են անհատի բազմակողմանի զարգացման կարևոր նախադրյալ։ Աշխատանքի տեխնիկական զարգացումը և արտադրության տեխնոլոգիական նոր պրոցեսների ստեղծումը աստիճանաբար հանգեցնում են նեղ պրոֆիլի մասնագիտությունների մահացման և լայն պրոֆիլի մասնագիտությունների առաջացման։ Տեխնիկայի առաջընթացին զուգահեռ աշխատանքի հասարակական բաժանման հին ձևերը հետզհետե սպառում են իրենց, իսկ մի մասն էլ ձուլվում է նոր հիմքի վրա՝ ստեղծելով լայն պրոֆիլի կոմպլեքսային մասնագիտություններ։ Այսօր էլ ավելի է մեծանում այնպիսի աշխատանքների տեսակարար կշիռը, ինչպիսիք են ավտոմատ գծերի, ճշգրիտ հաստոցների, զոդող, ջերմային, գալվանական սարքավորումների, ավտոմատ ագրեգատների, հսկող-ստուգող

---

19 Ֆ. Էնգելս, Կոմունիզմի սկզբունքները, Երևան, 1959, էջ 34—35։

20 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 512։

21 Նույն տեղում։

ապարատների կարգավորումը։ Գիտական մտքի նորագույն նվաճումներն իրենց ներդրման համար պահանջում են համակողմանի զարգացած աշխատավոր, որն ունակ է արագորեն յուրացնել արտադրության նոր մեթոդները և անհրաժեշտության դեպքում անցնել աշխատանքային գործունեության մի տեսակից մյուսին՝ համատեղելով մասնագիտությունները։ Հարակից, սահմանակից և տարբեր մասնագիտությունների գիտական հիմունքների յուրացումը ենթադրում է բազմակողմանիորեն զարգացած ունակություններ ունեցող մարդկանց, այնպիսի մարդկանց, որոնք ընդունակ են կողմնորոշվելու արտադրության ամբողջ սիստեմում»[22]։

Այսօր արդեն մեր կյանքում գոյություն ունեն բազմակողմանի զարգացած անհատի իդեալը մարմնավորող բազմաթիվ մարդիկ, որոնց համար նորարարությունը և գյուտարարությունը դարձել են կենսական պահանջմունք, իսկ տարբեր մասնագիտությունների համատեղումը՝ նորանոր բնագծեր նվաճելու գործնական միջոց։ Այդ նոր տիպի աշխատավորները չեն հանգստանում ձեռք բերածով և ձգտում են նվաճել նորանոր բարձունքներ՝ իրենց մեջ հետզհետե կատարելագործելով բազմակողմանիության ծիլերը։ Նման անհատին բնորոշ է ոչ միայն բարձր որակավորումը, հանրակրթական ու մասնագիտական լայն պատրաստվածությունը, խոր գիտելիքները, արտադրական փորձը և բարձր վարպետությունը, այլև աշխատանքի նկատմամբ նոր վերաբերմունքը, բարոյական և գեղագիտական բարձր հատկությունները, ստեղծագործական աշխատանքի զուգակցումը արտադրության կառավարման, տեխնիկական և գեղարվեստական ինքնագործունեության հետ։

Անհատի բազմակողմանի զարգացման գործում առանձնապես մեծ է ժամանակակից գիտատեխնիկական նվաճումների հետևողական յուրացումը։ Արդի գիտատեխնիկական հեղափոխության բուռն ծավալման պայմաններում, երբ նյութական արտադրությունն ավելի ու ավելի է դառնում գիտահետազոտական մտքի զարգացման փորձարարական բազա, հրատապ է դառնում տեխնիկապես կիրթ և կուլտուրական աշխատավորի ձևավորման պրոբլեմը։

Գիտության և տեխնիկայի արագ զարգացումը, արտադրական կուլտուրայի բարձրացումը, տեխնիկական գեղագիտության նվաճումների օգտագործումը, հեռացույց կառավարումը և այլն կհանգեցնեն այն բանին, որ բանվորը հետագայում կդադարի արտադրության պարզ ֆունկցիաներ կատարելուց և կդառնա արտադրության կազմակերպման ու ստեղծագործական ֆունկցիաների անմիջական կրող։ Այսօր արդեն նկատելի է, որ բարձր որակավորված ամեն մի աշխատավոր ձգտում է լինել ոչ թե արտադրության պարզ ֆունկցիաների կատարող, այլ բազմատեսակ ու բարդ ֆունկցիաների անմիջական մասնակից։ Բարդ աշխատանքի շնորհիվ անհատը ստանում է ինքնահաստատման, ինքնարտահայտման լայն հնարավորություններ, փոխվում է ինքը՝ մարդը, կատարելագործվում են նրա բանական ու ֆիզիկական ուժերը։ Եվ որքան մեծ չափերի են հասնում նրա ստեղծագործական ուժերը, նա այնքան ավելի խորությամբ է դրսևորում իրեն որպես մտածող ու արտադրության սուբյեկտ։

Գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում աշխատավորների գիտելիքների ընդլայնումը, կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրա-

---

22 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 116։

ցումը, մասնագիտական վարպետության և հմտությունների խորացումը, ստեղծագործական ակտիվության և ինքնագործունեության ծավալումը դառնում են նյութական հիմք, որպեսզի նրանց արտադրական ֆունկցիաներն ամբողջովին հակվեն զգայական-տրամաբանական գործունեության կողմը։ Մեքենաների արտադրական կոմպլեքսների կիրառման շնորհիվ պարզ մկանային ջանքերից ծանրության կենտրոնը տեղափոխվում է մտավոր հոգեբանական պրոցեսների բնագավառը։ Արտադրության լրիվ ավտոմատացման հետևանքով աշխատավոր անհատն ազատվում է արտադրությանն անմիջականորեն մասնակցելուց և դառնում է տեխնիկական բարդ միջոցների կարգավորող, ավտոմատացված կոմպլեքսների հսկող ու կառավարող։ Նման պայմաններում «աշխատանքը հանդես է գալիս ոչ այնքան արտադրության պրոցեսի մեջ պարփակված, որքան այնպես, որ մարդը դառնում է արտադրության բարդ պրոցեսի նկատմամբ նրա վերահսկողն ու կարգավորողը»[23]։

Սակայն անհատի բազմակողմանի զարգացումը չի սահմանափակվում սոսկ արտադրական գործունեությամբ։ Արտադրության ոլորտը անհատի բարձր որակավորման, տեխնիկական համակողմանի գիտելիքների և ունակությունների դաստիարակման թեև վճռական, բայց ոչ միակ բնագավառն է։ Անհատի բազմակողմանի զարգացումը կատարվում է մեր հասարակական կյանքի բոլոր ոլորտների ազդեցության ներքո։ Բազմակողմանի զարգացած անհատի ձևավորումը ենթադրում է գիտելիքների լայն յուրացում, կոմունիստական գիտակցականություն, կուլտուրական մակարդակի աճ, գաղափարական համոզվածություն, գիտական մտածողության մակարդակ և հոգևոր աշխարհի հարստություն։ Այստեղ առաջնակարգ նշանակություն ունի գիտական աշխարհայացքի հաղթանակը՝ որպես մարքսիզմի փիլիսոփայական, տնտեսագիտական և սոցիալ-քաղաքական հայացքների միասնական ու կուռ սիստեմ։ Խորությամբ ու ճիշտ արտացոլելով բնապատմական պրոցեսների դիալեկտիկական բնույթը, մարքս-լենինյան աշխարհայացքը ծառայում է մեր հասարակության գաղափարական և բարոյա-քաղաքական միասնության ամրապնդմանը, մասսաների ստեղծագործական ակտիվության բարձրացմանը և կոմունիզմի գաղափարների կենսագործմանը։

Անհատի բազմակողմանի զարգացման գործում առանձնահատուկ նշանակություն ունի նրա դաստիարակությունը կոմունիստական բարոյականության ոգով։ Դաստիարակել աշխատավորի նոր տիպ, նշանակում է յուրաքանչյուր մարդու մեջ արմատավորել բարոյական բարձր հատկություններ, սովորեցնել նրան կոմունիստական ապրելակերպին, կոմունիստական բարոյականության սկզբունքները դարձնել նրա գործունեության և վարքագծի հիմք։ Իսկ դա հնարավոր է միայն այն ժամանակ, երբ մարդը հասարակական պահանջմունքները գիտակցում է որպես իր անձնական պարտականություն, երբ դրանք փոխարկվում են ներքին համոզմունքի, գործունեության խթանի, վարքագծի կայուն սովորույթի։

Անհատի հոգևոր աշխարհի համակողմանի ծաղկումն անհնարին է առանց նրա գեղագիտական հայացքների և զգացմունքների զարգացման։ Գեղագիտական դաստիարակությունը նպատակ ունի մարդկանց մեջ մշակել իսկական գեղեցկությունն ընկալելու բարձր ճաշակ, որպեսզի նրանք կառու-

---

[23] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. II, стр. 213.

ցեն նոր կյանքը «գեղեցկության օրենքներին համապատասխան» (Մարքս)։

Նոր մարդու գեղագիտական դաստիարակության հիմնական միջոցը սոցիալիստական արվեստն է, որը մարդու մեջ սերմանում է ոչ միայն գեղարվեստական հմտություններ և ունակություններ, գեղեցկությունը նրբորեն դնահատելու ընդունակություն, այլև տոլորեցնում է նրան իր ամենօրյա գործունեության մեջ առաջնորդվելով գեղեցիկի զգացումով, գիտակցաբար կերտել կոմունիստական գալիքը։ Կոմունիստական հասարակարգում արվեստը իրոք կդառնա անհատի հոգևոր աշխարհի համակողմանի զարգացման միջոց, որովհետև նա մի կողմից կոնկրետ զգայական կերպարների ու պատկերների միջոցով կներդործի մարդու ներքնաշխարհի վրա՝ առաջացնելով կյանքի գեղեցկության նկատմամբ հուզական զգայունակություն, մյուս կողմից՝ կհասնի այն բանին, որ հանդիսատեսը, ունկնդիրը կամ ընթերցողը ունենա գեղագիտական զգացմունքների կուլտուրա և գեղագիտական գնահատական տալու կարողություն, հավասար կանգնի արվեստագետի հետ թե՛ իր գիտելիքներով և թե՛ բանականությամբ։

Անհատի բազմակողմանի զարգացման անհրաժեշտ պայմանն է ազատ ժամանակը, որը Կ. Մարքսն անվանել է կոմունիզմի հիմնական տնտեսական օրենք։ Անհատի համակողմանի ծաղկումը ենթադրում է բանվորական ժամանակի հետագա կրճատում և ազատ ժամանակի մեծացում, որի շնորհիվ մարդը հնարավորություն կունենա իրեն նվիրելու իր որակավորման բարձրացմանը, ֆիզիկական կատարելությանը, ինքնակրթությանը, կուլտուրական մակարդակի բարձրացմանը, հասարակական գործունեությանը, երեխաների դաստիարակությանը, ստեղծագործ հանգստին և այլն։ Նյութական արտադրությունից դուրս ըստ էության «սկսվում է մարդկային ուժերի զարգացումը, որն ինքնանպատակ է, ազատության իսկական թագավորությունը, որը, սակայն, կարող է ծաղկել միայն անհրաժեշտության այդ թագավորության՝ որպես իր բազիսի վրա։ Աշխատանքային օրվա կրճատումը հիմնական պայմանն է»[24]։

Ազատ ժամանակն անմիջական սոցիալական արժեք է, քանի որ անդասակարգ հասարակության պայմաններում նա իր սոցիալական նշանակությամբ հավասարազոր կլինի աշխատաժամանակի ֆունկցիաներին՝ հասարակական հարստություն ստեղծելու իմաստով։ Կոմունիզմի ժամանակ, երբ աշխատանքը դառնա մարդու առաջին կենսական պահանջմունք, նրա ինքնարտահայտման ստեղծագործական պրոցես, վերջնականապես կվերացվի աշխատանքի և ազատ ժամանակի «աբստրակտ հակադրությունը»[25] և արտաշխատանքային ամբողջ ժամանակը կդառնա մարդկային կյանքի հարստության ընդհանուր չափանիշ։

Բազմակողմանի զարգացած անհատի ձևավորումը սոցիալիստական հասարակության մարդու հետագա կատարելագործման տրամաբանական ավարտն է։ Սակայն դա չի նշանակում, որ դրանով իսկ սահման կդրվի անհատի զարգացմանը։ Ոչ, անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը անվերջ պրոցես է, ինչպես որ անվերջ է կոմունիստական արտադրության կատարելագործումը։ Մարդու հասարակական բնույթի զարգացումը

---

24 «Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին», հ. 1, Երևան, 1963, էջ 320։

25 Նույն տեղում, էջ 317։

երբեք չի կարող հասնել բացարձակ ավարտվածության, քանի որ հասարակական-պատմական պրակտիկայի ընթացքում անհատն իր կենսական յուրաքանչյուր դրսևորման ժամանակ իրեն վերարտադրում է որպես նյութական և հոգևոր կուլտուրայի ավելի բարձր աստիճանի կրող և կերտող։ Կ. Մարքսը նշել է, որ կոմունիզմի պայմաններում «մարդն այստեղ չի վերարտադրում իրեն մի ինչ-որ ուղղությամբ միայն, այլ ստեղծում է իրեն իր լրիվ ամբողջականությամբ, նա չի ձգտում մնալ մի ինչ-որ վերջնականորեն հաստատված, այլև գտնվում է լինելիության բացարձակ շարժման մեջ»[26]։

Բազմակողմանի զարգացած և բազմակողմանի պատրաստված մարդկանց ձևավորումը կոմունիստական հասարակության կառուցման օբյեկտիվ պահանջմունքն է։ Կոմունիզմի հաղթանակի համար անհրաժեշտ խնդիրների լուծումը թելադրվում է հասարակության յուրաքանչյուր անդամի անմիջական և ամենախոր շահերով, նրա համակողմանի և ներդաշնակ զարգացմամբ։ Այդ պատճառով մեր կուսակցությունը 10-րդ հնգամյակի հիմնական խնդիրներից մեկը համարում է սովետական բոլոր մարդկանց հոգևոր և ֆիզիկական ուժերի զարգացումը և հետագա կատարելագործումը։ «Ավելի ու ավելի լայն հնարավորությունների օգտագործում սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացման, աշխատավորների հասարակական ակտիվության ու նախաձեռնության դրսևորման, արտադրության կառավարմանը նրանց մասնակցության համար»[27],— ասված է ՍՄԿԿ XXV համագումարին ներկայացվող ՍՄԿԿ Կենտկոմի նախագծում։

ВСЕСТОРОННЕЕ РАЗВИТИЕ ЛИЧНОСТИ В ПЕРИОД СТРОИТЕЛЬСТВА КОММУНИЗМА

Р. А. АВАКЯН

Резюме

Под всесторонним развитием личности понимается, с одной стороны, раскрытие и развитие ее способностей и дарований, что обуславливается наличием необходимых социальных условий, и с другой — их практическое применение в соответствии с общественными потребностями. Всестороннее развитие личности выражается во всем богатстве человеческих проявлений.

Источником развития внутренних сущностных сил личности служит совокупность всех общественных отношений, осваиваемая человеком в процессе его жизнедеятельности. Всесторонне развитым является человек, у которого все богатство духовных и физических сил находит практическое применение в разных сферах его деятельности и в первую очередь — в процессе общественного производства.

---

[26] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. I, стр. 476.

[27] «Սովետական Հայաստան», 14. XII. 1975։